



ՀՀ բնակահայտության նախարարություն

«Հայաստան. քաղաքային ջեռուցման և տաք ջրամատակարարման էներգաարդյունավետության բարձրացում» ՄԱԶԾ/ԳԷՖ/00035799 Ծրագիր

Սպիտակ քաղաքի Շահումյան 9/1 հասցեով գտնվող կաթսայատան էներգաարդյունավետության բարձրացման ծրագիր

Հաշվի առնելով Սպիտակի քաղաքապետարանի և Ծրագրի արդյունավետ համագործակցությունը Սպիտակ քաղաքի «Կենտրոն-1» թաղամասի կենտրոնական ջեռուցման համակարգի գործարկման ծրագրի շրջանակներում, և նպատակ ունենալով ապահովել Սպիտակ քաղաքի կենտրոնական ջեռուցման համակարգի կայուն շահագործումը, Սպիտակի քաղաքապետարանը դիմել է Ծրագրին՝ հայցելով նրա աջակցությունը Սպիտակ քաղաքի N2 մանկապարտեզը, N3 դպրոցը և քաղաքապետարանի շենքը սնող կենտրոնական ջեռուցման համակարգի էներգաարդյունավետության բարձրացմանն ուղղված ծրագրի իրականացմանը:



2010թ. մայիսի 25-ին Ծրագրի և քաղաքապետարանի միջև կնքվել է Համագործակցության Համաձայնագիր, որի նպատակն է համատեղ ջանքերով՝ համաֆինանսավորման սկզբունքով, իրականացնել Շահումյան 9/1 հասցեով գտնվող կաթսայատան վերակառուցման և արդիականացման աշխատանքները: Այս աշխատանքների իրականացման արդյունքում գազի ակնկալվող տնտեսումը ջեռուցման սեզոնի ընթացքում կազմելու է մոտ 30 000 խմ, որի արդյունքում ջերմոցային գազերի արտանետումների ակնկալվող կրճատումը կազմելու է մոտ 27 տ CO₂համ.:

Ըստ Համաձայնագրի կաթսայատան վերակառուցման նախագծման աշխատանքները կիրականացվեն Քաղաքապետարանի կողմից, իսկ Ծրագիրն կֆինանսավորի կաթսայատան վերակառուցման աշխատանքները, ինչպես նաև դրանց իրականացման համար անհրաժեշտ նյութերի և սարքավորումների ձեռք բերումը:



Ներկայումս մրցութային կարգով արդեն իսկ ընտրվել են համապատասխան կապալառու կազմակերպությունները և աշխատանքները մեկնարկելու են մոտակա օրերին: Աշխատանքների ավարտը նախատեսվում է մինչև 2010-2011 թթ. ջեռուցման սեզոնի սկիզբը: